ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 50-ԱՄՅԱԿԸ

Շուրջ կես դար է անցել այն օրերից, երբ 1958 թ. Երևանում, Հայաստանի Գիտությունների ակադեմիայի կազմում ստեղծվեց Արվեստի ինստիտուտը՝ (ներկայումս՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը)[1]:

Արվեստի ինստիտուտի հիմնադիր տնօրենն ու բազմամյա ղեկավարն էր ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, ակադեմիկոս Ռուբեն Զարյանը: 1987-2003 թթ. այդ պաշտոնը վարել է ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, ակադեմիկոս Լևոն Հախվերդյանը: 2003 թ. տնօրենի պարտականություններն է ստանձնել ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանը: Ինստիտուտի գիտական գծով տնօրենի տեղակալներ են եղել Սաբիր Ռիզաևը (1958-1979), Գևորգ Գյոդակյանը (1979-2005), իսկ այժմ՝ Աննա Ասատրյանը (2005-ից):

Ստեղծման պահին ինստիտուտում գործել են ճարտարապետության (բաժնի վարիչ՝ Ալեքսանդր Սահինյան), կերպարվեստի (բաժնի վարիչ՝ Ռուբեն Դրամբյան), թատրոնի (բաժնի վարիչ՝ Ռուբեն Զարյան) և երաժշտության (բաժնի վարիչ՝ Մաթևոս Մուրադյան) բաժինները: 1965 թ. երաժշտության բաժնի հիմքի վրա սկսել են գործել երաժշտության (բաժնի վարիչ՝ Գ. Գյոդակյան) և ժողովրդական երաժշտության (բաժնի վարիչ՝ Մաթևոս Մուրադյան) բաժինները: Արվեստի ինստիտուտում 1979-1988 թթ. գործել է Կինոյի և հեռուստատեսության բաժինը (բաժնի վարիչ՝ Կարեն Քալանթար): 1969-1986 թթ. գործել է Կիրառական արվեստի բաժինը՝ փորձարարական արվեստանոցով (վարիչ՝ Ռուբեն Դրամբյան)[2]: 1976 թ. գործող՝ արվեստագիտության գծով գիտական աստիճանաշնորհման մասնագիտական խորհրդի իրավահաջորդը դարձավ ՀՀ ԲՈՀ-ի որոշմամբ 1995 թ. ստեղծված խորհուրդը՝ միակը հանրապետությունում, որը գիտական աստիճաններ է շնորհում արվեստագիտության բոլոր բնագավառներում:

Արվեստի ինստիտուտը գիտական միակ հաստատությունն է, որտեղ կատարվող ուսումնասիրությունների կարևոր ուղղություններն ընդգրկում են հայ արվեստի գրեթե բոլոր տեսակների (կերպարվեստ, ճարտարապետություն, դեկորատիվ և կիրառական արվեստներ, երաժշտություն, թատրոն, կինո և հեռուստատեսություն) պատմությունն ու տեսությունը[3]: Աշխատանքներ են տարվում

---

[1] Մինչ այդ՝ սկսած 1944 թ. Հայաստանի ԳԱ կազմում գործել է երաժշտության պատմության և տեսության սեկտորը, Պատմության ինստիտուտին կից արվեստի պատմության բաժինը: 1948 թ. դեկտեմբերի 29-ին Հայաստանի ԳԱ երաժշտության պատմության և տեսության սեկտորի հիման վրա կազմակերպվում է արվեստների պատմության և տեսության սեկտորը (վարիչներ՝ Ք. Քուշնարյան, Մ. Սարյան, Վ. Հարությունյան, Ռ. Զարյան): Մեկ տասնամյակ անց, սեկտորի հիման վրա ստեղծվում է Արվեստի ինստիտուտը:

[2] 1966 թ. ինստիտուտում գործում է ակադեմիկոս Ռ. Զարյանի անվան Շեքսպիրագիտական կենտրոնը՝ իր հարուստ գրադարանով:

[3] Ինստիտուտն ունի հետևյալ գիտական ստորաբաժանումները՝ ճարտարապետության բաժին (վարիչ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ վաստակավոր ճարտարապետ, ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Մուրադ Հասրաթյան), կերպարվեստի բաժին (վարիչ՝ ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Վիգեն Ղազարյան), երաժշտության բաժին (վարիչ՝ ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Գևորգ Գյոդակյան), թատրոնի բաժին (վարիչ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հենրիկ Հովհաննիսյան), ժողովրդական երաժշտության բաժին (վարիչ՝ արվեստագիտության թեկնածու, դոցենտ Միհեր Նավոյան):

ազգային երաժշտության ու թատրոնի, ճարտարապետության և կերպարվեստի դասականների ստեղծագործական, հուշագրային, նամակագրական ժառանգության ակադեմիական հրատարակության, ֆոլկլորային նմուշների հավաքման, դասակարգման, վերծանության, համակարգչային մշակման ուղղությամբ[4]*:*

2008 թ. նոյեմբերի 28-ին ՀՀ ԳԱԱ նիստերի դահլիճում տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հիմնադրման 50-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսավոր նիստը: Բացման խոսքում ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանն ասաց. «Այսօր մենք հավաքվել ենք նշելու Ակադեմիայի լավագույն ինստիտուտներից մեկի՝ Արվեստի ինստիտուտի հիմնադրման 50-ամյակը, ինստիտուտ, որի երախտավորներն իրենց արժեքավոր ուսումնասիրություններով ու գործերով արվեստի բոլոր ճյուղերը ներկայացրել են աշխարհին ու հանրությանը»: Ապա ԳԱԱ նախագահը հիշեց ինստիտուտի երկու երախտավորներին՝ Ռ. Զարյանին, որը երկար տարիներ ղեկավարել է ինստիտուտն իր բարձր պրոֆեսիոնալ մակարդակով և մեծ հեղինակությամբ և Լ. Հախվերդյանին, որը հանդես էր գալիս ոչ միայն արվեստի, այլև հայ գրականության և հայոց լեզվի հիմնահարցերով: Նրանց ավանդույթներն այսօր հաջողությամբ շարունակում է Արարատ Աղասյանը:

«ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը հիսուն տարում» զեկուցումով հանդես եկավ ինստիտուտի տնօրեն Ա. Աղասյանը, որն իր բովանդակալից բանախոսության մեջ հանգամանորեն ներկայացրեց ինստիտուտի նվաճումներն ու ձեռքբերումները, նախանշեց հետագա անելիքներն ու անդրադարձավ ինստիտուտի առջև ծառացած հիմնախնդիրներին[5]*:*

Ողջունելով հոբելյարներին՝ ՀՀ կրթության և գիտության նախարար Սպարտակ Մեյրանյանը հրապարակեց ՀՀ ԿԳՆ շնորհավորական ուղերձը, Ս. Մեյրանյանը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի մի խումբ աշխատակիցների հանձնեց ՀՀ ԿԳՆ հուշամեդալներ, պատվոգրեր ու շնորհակալագրեր: ՀՀ Կրթության և գիտության նախարարության Ոսկե հուշամեդալով պարգևատրվեցին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն Արարատ Աղասյանը, կերպարվեստի բաժնի վարիչ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Վիգեն Ղազարյանը, առաջատար գիտաշխատող, արվեստագիտության դոկտոր Մարգարիտա Ռուխկյանը և տնօրենի տեղակալ Աննա Ասատրյանը: ՀՀ ԿԳՆ պատվոգրով և շնորհակալագրով պարգևատրվեցին ինստիտուտի մի շարք աշխատակիցներ :

---

[4] ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի Ա.Քոչարյանի անվան ձայնադարանային ֆոնդը երաժշտականբանահյուսական եզակի սկզբնաղբյուրի բացառիկ արժեք ունի: Դեռևս 1920-ականներից մինչև մեր օրերը գրանցված գիտարշավային նյութերն ընդգրկում են Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերը, Վրաստանի հարավային շրջաններն ու Թբիլիսին, Աբխազիայի Ինքնավար Հանրապետությունը, Ռուսաստանի Դաշնության Ռոստովի մարզի և Կրասնոդարի երկրամասի հայաշատ վայրերը, Ադրբեջանի հայաբնակ վայրերը՝ Կիրովաբադ, Շամխոր: Ձայնադարանում առկա է Արևմտահայաստանից, արաբական և եվրոպական երկրներից՝ Ռումինիայից, Բուլղարիայից ներգաղթած և այստեղ բնակություն հաստատած բանասացներից գրառված նմուշների ստվար քանակ՝ շուրջ 3.000 նմուշ, որոնք ներկայացնում են Արևմտյան Հայաստանը: Ձայնադարանի հնչյունային վավերագրերի հավաքածուն ընդգրկում է գրեթե ողջ պատմական Հայաստանը՝ իր երաժշտական բնույթագրով:

[5] Տե՛ս **Աղասյան Ա.,** ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը 50 տարում (Գիտություն, 2008, դեկտեմբեր, N 5 (205), էջ 4-5):

Շնորհավորելով հոբելյանի կապակցությամբ՝ ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ Դավիթ Մուրադյանն ընդգծեց Արվեստի ինստիտուտի հոբելյանի գիտապատմական և բարոյական նշանակությունը Այնուհետև Դ. Մուրադյանը հանձնեց ՀՀ մշակույթի նախարարության պարգևները: Ոսկե մեդալով պարգևատրվեց թատրոնի բաժնի վարիչ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հենրիկ Հովհաննիսյանը, պատվոգրով՝ Աննա Ասատրյանը, ավագ գիտաշխատողներ Սվետլանա Գուլյանը, Զավեն Թագակչյանը, Մարինա Ստեփանյանը, գիտաշխատող Արա Դեմիրխանյանը և ինստիտուտի արվեստաբանական գիտական գրադարանի վարիչ Գայանե Մեկբեկյանը:

ՀՀ ԳԱԱ նախագահ Ռ. Մարտիրոսյանը հանձնեց ՀՀ ԳԱԱ վաստակագրերն ու պատվոգրերը: ՀՀ ԳԱԱ վաստակագրով պարգևատրվեցին առաջատար գիտաշխատողներ, արվեստագիտության դոկտորներ Աննա Արևշատյանը, Լիլիթ Երնջակյանը, ճարտարապետության դոկտոր Լոլա Դոլուխանյանը, արվեստագի-տության թեկնածու Կարինե Սարգսյան-Խուդաբաշյանը, ավագ գիտաշխատողներ, ճարտարապետության դոկտոր Վանիկ Խաչատուրյանը և ժողովրդական երաժշտության բաժնի վարիչ, արվեստագիտության թեկնածու Միհեր Նավոյանը: ՀՀ ԳԱԱ պատվոգրով պարգևատրվեցին մի խումբ գիտաշխատողներ:

Շնորհավորանքներով և ողջույններով հանդես եկան ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Մեն Արևշատյանը, Ալ.Սպենդիարյանի անվան պետական ակադեմիական թատրոնի փոխտնօրեն Վրեժ Հակոբյանը, Հայաստանի ճարտարապետների միության նախագահ Մկրտիչ Մինասյանը, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի գիտական գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Հենրիկ Սմբատյանը, Հայաստանի ազգային պատկերասրահի տնօրեն, պրոֆեսոր Փարավոն Միրզոյանը, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի պրոռեկտոր Անետա Երզնկյանը, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի ռեկտոր Արամ Իսաբեկյանը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Մելքոնյանը, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր Ավիկ Իսահակյանը: Հայաստանի նկարիչների միության ուղերձը հրապարակեց Տարիել Հակոբյա

Հավարտ հոբելյանական հանդեսի ելույթ ունեցավ Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը՝ ԽՍՀՄ և ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ և ՀԽՍՀ պետական մրցանակների դափնեկիր, ՀՀ ԳԱԱ հուշամեդալակիր Հով-հաննես Չեքիջյանի ղեկավարությամբ: Համերգը բացառիկ էր. ինստիտուտի հիսնամյա պատմության մեջ առաջին անգամ կապելլան մի ամբողջ համերգային ծրագիր նվիրեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հոբելյար-գիտնականներին:

Ինստիտուտի հիմնադրման 50-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների շարքի հաջորդ ակորդը հնչեց դեկտեմբերի 3-ին, Ա. Խաչատրյանի տուն-թանգարանում. Հայկական երաժշտական ասամբլեան՝ հանձին նախագահ, կոմպոզիտոր Լևոն Չառուշյանի, այդ օրը մատուցեց իր նվերը. խմբերգային երաժշտության համերգը միջազգային մրցույթների դափնեկիր «Սպեղանի» երգչախմբի կատարմամբ, որի գեղարվեստական ղեկավարն ու խմբավարն է Մարինա Ավթանդիլյանը:

Հոբելյանական միջոցառումների շարքում դեկտեմբերի 16-17-ին տեղի ունե-ցավ Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական երրորդ նստաշրջանը:

Բացման խոսքում Ա. Աղասյանը ողջունեց արդեն ավանդական դարձած՝ երիտասարդ արվեստաբանների գիտաժողովի մասնակիցներին և կարևորեց այն հանգամանքը, որ հիսնամյա բեղուն և արգասաբեր ուղի անցած ինստիտուտն այսօր ունի հեռանկարային հերթափոխ: Երիտասարդ արվեստաբաններին իր ողջույնի խոսքն ուղղեց ՀՀ գիտության պետական կոմիտեի նախագահ, ֆիզ-

մաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Հարությունյանը: ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար Վլադիմիր Բարխուդարյանը կարևորեց նման միջոցառումների անցկացումը՝ նշելով, որ երիտասարդական գիտաժողովներում են աճել այսօրվա պատմաբան դոկտորներից շատերը: «Հատկապես ողջունում եմ Արվեստի ինստիտուտի երիտասարդական գիտաժողովները: Նախկինում չկար: Ինստիտուտի երիտասարդ ղեկավարությունը նախաձեռնեց այդ և մեծ հաջողություն ունեցավ: Մյուս տեղերում՝ կոնսերվատորիա, Գեղարվեստի ակադեմիա, Թատրոնի և կինոյի ինստիտուտ, ուսումնասիրվում է արվեստի միայն մեկ ուղղություն, իսկ Արվեստի ինստիտուտը բազմապրոֆիլ է, ուստի մյուսների համեմատ Արվեստի ինստիտուտի ներուժը մեծ է»,- իրավացիորեն նկատեց ակադեմիկոս Բարխուդարյանը:

Նստաշրջանի աշխատանքներին մասնակցեցին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի, Մատենադարանի, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի, Գեղարվեստի պետական ակադեմիայի, Թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի, Հայաստանի ազգային պատկերասրահի մի շարք արվեստաբաններ:

ԱՍԱՏՐՅԱՆ Ա.Գ.
Արվեստագիտության թեկնածու